Շատ յոյս պիտի չդնել մեծ պետութիւնների վրայ։ Նրանք որքան էլ հակադիր լինեն միմեանց, իրենց ազգային ու միջազգային շահերը պահանջում են չմխրճուել Հայկական Դատի նման մի նոր թնձուկի մէջ։ Ըստ իրենց, Հայ Դատը կարող է գալ եւ խախտել ազդեցութեան գոտիների նկատմամբ իրենց կարգադրութիւնը։ Փաստորէն, մեր ընական դաշնակիցները մնում են երբեմնի բախտակից, սակայն այսօր անկախութեան հասած երկրներն ու փոքր պետութիւնները, յատկապէս Երրորդ Աշխարհում։ Նրանց բարեկամութիւնը շահելով, որ Հայ Դատը կարող է օրակարգի նիւթ դառնալ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում, ուր վետոյի իրաւունք չունեն հինգ մեծ պետութիւնները։ Այդպէս եղաւ Խարայէի պարագային, այն տարրերութեամբ սակայն, որ նրա ճանաչ-

ման ջատագով էին նաեւ Միացեալ Նահանգներն ու Խորհրդային Միութիւնը:

Ամէնից մեծ խոշնդպուտն այն է, որ ցեղասպանութեան օրինագիծը տակալին չի վաւերացուել ՄԱԿ-ում: Իսկ ամէնից ցաւալին այն, որ արդարութեան ու ժողովրդավարութեան արդի ռահվիրան հանդիսացող Միացեալ Նահանգները մինչեւ այսօր ձգձգում են այդ օրինագիծի վաւերացումը: Գրեթէ 36 տարի է, որ ամերիկեան Սենատը չի կարողացել քաղաքական ու բարոյական անհրաժեշտ կամքը ցուցաբերել ընդունելու համար Ենթասպանութեան Համաձայնագիրը, ինչպէս այդ արել են ՄԱԿ-ին անդամակից աւելի քան 90 այլ պետութիւններ:

1949 թուին Նախագահ Թօրումընը Կոնգրեսին ուղարկեց այդ օրինագիծը, սակայն Սենատը ամէն անգամ մի պատրուակ է գտնում յետածգելու վաւերացումը: Չնայած այն հանգամանքին, որ 65 ծերակուտականներ կողմնակից են ցեղասպանութեան օրինագծի վաւերացմանը, սակայն մնացեալ փոքրամասնութիւն կազմող սենատորները յանպիսի մեծ հեղինակութիւն ունեն, որ արգելք են հանդիսանում, առարկելով, թէ նման օրինագծի վաւերացումը կը գայ խախտելու առանձին նահանգների սահմանադրական ինքնիշխանութիւնը, մի պատճառաբարանութիւն, որը միանգամայն անիրատես ու անտրամաբանական է:

Այլընհառութից զատ, յետ-պատերազմեան շրջանի ամերիկեան բոլոր նախագահները յորդորել են Կոնգրեսին վաւերացնել այդ օրինագիծը։ 1984-ի Սեպտեմբերին Նախագահ Ռէյգանը նոյնական Սենատի ուղարկութեանը յանձնեց Ցեղասպանութեան գէմ օրինագիծը, որի քննարկումը սակայն օրակարգային պատրուակով կրկին յետաձգուեց։

Հայութեան համար յոյժ կարեւոր է Ենդասպանութեան դէմ օրինագծի վաւերացումը Միացեալ Նահանգների կողմից։ Այդ ուղղութեամբ մեծ ջանքեր են թափում մարդու իրաւունքների համար պայքարող ամերիկեան ու միջազգային բազմաթիւ կազմակերպութիւններ։ Փամանակն է, որ գործով սատար հանդիսանանք այդ ջանքերին։ Մեծ եղեռնի 70-ամեակի առթիւ Վաշինգտոննեան հնգօրեայ կրօնական ու մշակութային հանդիսաւոր նշումները ոչ միայն իսրայէլանից պիտի հանդիսանան մեր ժողովրդի յարաւուման ու զարթոնքի, այլ նաև կրկին անգամ լուսարձակի տակ պիտի զնեն Հայ Դատի ու Հայոց ցեղասպանութեան բազմիցս մոռացուած իրողութեան այժմէականութիւնը։ Այս եւ Նման լուրջ ճեռնարկները անտարակոյս իրենց դրական ազդեցութիւնը պիտի թողնեն ամերիկեան կառավարական շրջանակների վրայ՝ նպաստաւոր ենթահող պատրաստելով յօդուտ Ցեղասպանութեան ՄԱԿ-ի օրինագծի վաւերացման, ուստի եւ Հայոց Ցեղասպանութեան փաստի ճանաչման։

Անհրաժեշտ է նաև, որ ամէն մի հայ եւ հայկական ամէն մի կազմակերպութիւն նամակներով ու հեռագրերով ճնշում բանեցնի Սենատի անդամների, յատկապէս հարաւային նահանգների ծերակուտականների վրայ՝ չուտափոյթ վաւերացում պահանջելեք Յեղասպանութեան ՄԱԿ-ի համաձայնագրի, երբ այս այս տարի վերստին քննարկութեան դրուի ամերիկեան Սենատումը։ Անհրաժեշտ է նաև, որ մամուլի եւ հաղորդակցութեան այլ միջոցներով շարունակ արծարծուի ցեղասպանութեան հարցը ոչ թէ կարեկցութիւն հայցելու, այլ ապացուցելու Մեծ եղեննի իրողութիւնը եւ նրա ահույի ազդեցութիւնը մարդկութեան բարոյական չափանիշերի վրայ։

Թէկուզ որքան էլ Հերկովէսեան լինեն մեր ջանքերը, մենք մնում ենք աշխարհացրիւ համայնքներ, իսկ համայնքը քաղաքական ամբողջութիւն չէ, որի հետ գործ ունենան պետութիւններն ու Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը: Այդ իսկ պատճառով է, որ հանդէս պիտի գալ որպէս քաղաքական կուռա մի միաւոր, մէկ ձայնով, մէկ ներկայացուցչութեամբ, մէկ որոշակի պահանջով: Սակայն առաջին նախապայմանը Թուրքիայի խոստովանութիւնը պէտք է լինի, թէ ցեղասպանութիւն է գործել: Այդ նախափաստն է, որ հիմք պիտի ծառայի մեր իրաւական պահանջների: Այլապէս, երբ դանակը ոսկորին է հասնում, կանգ է առնում տրամաբանութիւնը եւ տարերային տարածք ստանում եօթանասունամեայ յուսալքութիւնն ու դրա հետեւանք խօլ զայրոյթը:

Ոչ մի հայ եւ քաղաքակիրթ ոչ մի մարդ չի դրուատում ահարեկչութիւնը, սակայն երբ ահարեկչութիւնը քաղաքական բնոյթ է կրում, արարքը անմիջապէս զատապարտելու փոխարէն, պէտք է հասկնալ արարքի բուն դրդապատճառը, որը ոչ վերէժինդրութիւն է, ոչ էլ լոյկ ոճրագործութիւն, այլ յուսահատ ճիշը մի բուռ հայորդների ընդդէմ քարացած աշխարհի: Դատական ատեանների փոխարէն, տուեալ մարմինները առաջին էերթին դատաստանի պիտի կանչեն բուն ոճրագործին, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը գործելուց յետոյ եկել տեղ է գրաւել ազգերի գերդաստանում որպէս համահաւասար մէկ անդամը համաշխարհային համայնքի: Արդարութիւն չի կարող լինել աշխարհում, եթէ մոռացութեան տրուի դարիս ամենամեծ անառողակութիւնը:

սահարդարութիւնը:
Հայութեան մասին խօսել՝ ասել է, խօսել մարդկային ու ազգային իրաւունքների մասին: Լոկ պատմական պատահականութեան արդիւնք չէ, որ այսօր մարդ անհատի եւ ժողովուրդների իրաւունքները աւելի լայն չափերով են խախտում քան երբեւէ պատմութեան մէջ: Երկրագնդի մեծ մասը համատարած քանտի է վերածուած, ուր զանազան բռնադիրութիւնների ներքոյ տնքում են զանգուածները: Ցաւալին այն է, որ երբեմնի գաղութացուած ու ստրկացուած երկրները, մեծ պետութիւնների օրինակին հետեւելով, հարկադրական աշխատանքի ճամբարների են վերածել ասիսական ու աֆրիկեան տարածութիւնները: Պաշտօնական գծից դուրս որեւէ կարծիք չի հանդուրժւում: Աշխարհի բանտերը լեցուն են քաղաքական բանտարկեաններով: Շատ երկրներում խոշտանգն ու հալածանքը դարձել են սովորական երեւոյթներ: Իրենք՝ կառավարութիւններն են, որ զանգուածային սպանդի են ենթարկում իրենց ազգաբնակչութեանը: Գաղափարական հակառակորդին սպասում է մահը: Մարդկային իրաւունք խախտումները այնպիսի ծաւալ են ստացել, որ պետութեան դէմ դաւադրութիւն է նկատում մարդկային ու ազգային իրաւունքների մասին խօսելը:

շըջանի 60,000 հայ ազգաբնակչութիւնը սուլինահար եղաւ թուրք ասկեարների կողմէից կենտրոնացման ճամբարներում, երգնչանում 25.000 հայեր սրախողիսով եղան, երբ Տրապիզոնի հայ բնակչութեան կէսը ծովը նետուեց, երբ Եէլ-Դէյրմէկնի գետը ողողուած էր հայ անգլուի տղամարդկանց ու անստինք կանանց դիակներով, երբ Դիարբեկիրում թուրք բանակը ռչնչացրեց հայ 570,000 բնակիչներին, երբ մօր աչքի առջև մատողաշ զատրերը բռնաբարեցին, ապա շուրջ եկան յդի կնոջ արգանդի պատուեցին, երբ Տէր-Ել-Զօրում բոլոր հորերը լցուեցին ողջ մարդկանց դիակներով։ Այս բոլորը սկսուեց, երբ աշխարհի առջեւ բնաջնջուեց մի ամբողջ ժողովուրդ։

աշխարհ առջև բախչուուց սր ասթող ուղղողութ:

Անպատիթ մնացած թուրքի արարքը դարձաւ օրինակելի ամէն գոյնի, ամէն դաւանակի բոնապետների համար, որոնց անունների նշումն անգամ սրբադութիւն կր լինի:


MOBILIZATION FOR WORLD WAR I SETS THE STAGE FOR GENOCIDE



On August 2, 1914, general mobilization of the Turkish army was declared. Like their fellow Turkish citizens, all able-bodied Armenian men, with few exceptions, were called up for military service. Beginning in February, 1915, the Armenians in the armed forces were segregated into labor battalions, disarmed, and ultimately worked to death or massacred.



The Edict of Deportation was formally promulgated on May 27, 1915. Soon afterwards, Armenians throughout the Ottoman Empire were deported on short notice. Men were usually separated from the group and massacred. The remaining women, children, and elderly were marched across Asia Minor and Turkish Armenia to the Syrian desert, constantly attacked by brigands and the Special Organization "guards" who were ostensibly to offer protection. Thousands were kidnapped. Most of the deportees were massacred or died of starvation, disease, or exposure.



Approximately 500,000 Armenian refugees escaped to the north across the Russian border, south into Arab countries, or to Europe and the United States. Thus, the Armenians of the Ottoman Empire were virtually eliminated from their ancestral homeland as a result of a carefully executed government plan of genocide.



In February, 1915, the Turkish government disarmed the Armenian mountaineers of Zeitun, near Marash, and deported the population to the Salt Desert near Konia, or to the Syrian desert. Packed into boxcars, or forced to walk, often without food or water for days, they quickly perished. Deportations and massacres soon became the plight of Armenians in other areas.

Գործունելութիւններու Մուտքի Տոմսերու գորոյկ - Անցագիր

Սոյն գորոյկը կը գաճառուի 85 տոլարի և կը նեռարէ -

Օքախիսով փոխադրութիւն պահպակներու միջեւ
Փոխադրութիւն Երգահանդէսի սրան և Արլիմկրըն Գերեզմանոց
Մուտքի իրաւունք արուեստի ցուցահանդէսներուն
Շարժապատկեր — տեսաներիզներու ցուցադրութեանց
Մշակութային երեկոյին
Դասախոսութիւններուն
Պաշտօնական ձաշկերոյթին

Կը խնդրուի նկատի առնել թէ իրաքանչիւր գործունելութեան յատուկ տումն պիտի չվաճառուի: Հարկ է տումսերը ապահովել նախօրօֆ: որեւէ ձեռնարկի մուտքին տումն պիտի չվաճառուի: Տոմսերու գրեռյկը պես է գնել ամբողջութեամբ:

ACCOMODATION UPDATE: TYPICAL PACKAGE DEALS

To simplify your reservation planning for the 70th Anniversary Commemoration of the Genocide, we have broken down the cost differential from most major U.S. cities. The graph shows the three hotel options, (based on two nights accommodation), along with the cost factor for either air or bus transportation.

CITY	Charter Bus + 2 Nights Economy Cl.	Charter Bus + 2 Nights First Cl.	Charter Bus + 2 Nights Superior Cl.
BOSTON	\$ 105	\$ 119	\$ 158
PROVIDENCE	109	123	162
WORCESTER	108	122	161
NEW YORK	88	102	141
NEWARK	88	102	141
PHILADELPHIA	80	94	133
CHICAGO	128	142	181
DETROIT	114	128	167

CITY	Air + 2 Nights Economy Cl.	Air + 2 Nights First Cl.	Air + 2 Nights Superior Cl.
BOSTON	\$ 164	\$ 178	\$ 217
PROVIDENCE	184	198	237
WORCESTER	164	178	217
NEW YORK	144	158	197
NEWARK	124	138	177
PHILADELPHIA	144	158	197
CHICAGO	204	218	257
DETROIT	164	178	217
SAN FRANCISCO	304	318	357
FRESNO	324	338	377
LOS ANGELES	304	318	357
MIAMI	224	230	269
FT. LAUDERDALE	224	230	269

FARES FROM OTHER CITIES AVAILABLE UPON REQUEST

Note: All hotel rates are based on double occupancy.

Single occupancy is slightly higher.

Triple and Quad. occupancy available at some hotel.

For each additional night add: \$32 for economy class: \$39 for first class:

\$58 for superior class hotel.

Add \$85 to your total package for the "Admission package deal" and the "Passport", to your total. This includes admission to exhibits, banquet, concert and local transportation to these events.

ԽՇԱԽ, ԽԱՊՐԻԿ ՄԸ ՀՈՒՆԻՄ

ԽՄԲ. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ծովք, որ վերջերս կոչուած է նաև Կօլիմիք, կը գտնուի Խարբերդ քաղաքէն դէպի հարաւ-արեւելք 7-7½ ժամ հեռաւորութեան վրայ: Տարակոյս չկայ, որ իր անունը լակ-ծովակէն առած ըլլայ: «Ծով լերանց վրայ եւ լերանց մէջ խնկամանի կը նմանի»: Երկայնքը նաւազով կարելի է կտրել 8 ժամէն, իսկ լայնքը՝ 1½ ժամէն: Ծովակը շրջապատուած է 20-25 բրքարնակ եւ քրտարնակ գիւղակներով, որոնց մէջ միակ հայաբնակը՝ Ծովք գիւղն էր:

Ծովեցիներու տնտեսական կեանքին մէշ գլխաւոր տեղը կը գրաւէր ձկնորսութիւնը։ Հարուստ քէ աղբատ, բարեկեցիկ քէ իսկզն, առանց բացառութեան ամենքն այ ձկնորս էին զուտ ամրան երեք ամիսներուն։

Ծովակին ջուրը քիչ մը աղի է, այնչափ մը միայն, որ նաւորդները իրենց ծարաւը մեղմացնելու համար կը խմէին շատ անգամ: Լեակին կամ ծովակին մէջ կ'ապրին միմիայն երկու տեսակ առկեր: Չուկերէն մէկն է թիւնիկը, իսկ միւսը՝ ներմակ, մատնաչափ մեծութեամբ խտուտն է, որուն Ծովեցիք կուտային նաև խոռոչիկ եւ մանտրաս անունները:

Ծովեցիք կը շինէին կուեր, եօթը քարերով։ Վերցուելու չափ ծամր քարերուն երեքը առջեւ, իսկ կողմնակի երկուական կը շարէին։ Ամէն մէկ կոլ ուներ երկու քերան, որուն աջ կողմի քերանը կը հաստատէին լոֆլոփ-ը։ Լոֆլոփ-ը տոպրակի ձեւ ուներ. ևկոյք մատ չմտնելու չափ նեղ ծակերով հիսուած են քերանը աղեղնաձեւ փայտով մը, որուն երկու ծայրերը կ'ամրացնէին կոլ-ին քերանը կազմող քարերուն։ Խոտուսները արեւը մարք մուսնելէն եսքը, մուրիին՝ բաց քերաններէն կուգային եւ կը խաղային կուերուն մէջ։ Ծովեցին բոյսերով շինուած աւելով մը կամ խըրտոցով մը խոտուսները կը քշէր լոֆլոփներուն մէջ։ Այս գործողութիւնը որ կը խտարուէր կէս ժամր անզամ մը, կը կոչուէր Հօֆ։



Քրաւիտենսի Սրբոց Վարդանաց եկեղեցւոյ սիրելի ծխականներէն են Տէր եւ Տիկին
Գրիգոր Կարապետեանները՝ որոնք կը պատրաստուին Ուաշինգթոն երթալու

Սեղանին վրայ, պնակի մը մէջ, կողք կողքի շարուած են նոյն ազգէ, նոյն գոյնով, ցուցամատի մը երկարութեամբ աչազուրկ ինը խտուտներ: Խտուտը կամ Խտուտիկը Խարբերդ քաղաքէն ոչպի հարաւ արեւելք գտնուող Ծովքի լճակի հոչակաւոր ճերմակագոյն ձկնիկն է, որուն այնքա՞ն ծանօթ են Ծովքի հայրանակ Ծովք գիւղի բնակիչները:

Անհուն կարստը սրբագիր է եւ սրբազնան առաջկաներու Հանդէպ վերապահուած երկիւղածովաթեամբ է որ մեր հիւրընկալը՝ Պրն. Գրիգոր Կարապետեանը ցոյց կուսայ իր ծննդավայրէն իրեն լիւատակ սեռուած խոտուտներո:

Գրիգոր Կարապետեանը, խուռանքերու հետ ապրած, առ իր բողոք թրքական խօժութասց : Գրիգոր Կարապետեանը, խուռանքերու հետ ապրած ու մեծած 10-12 տարեկան երախան էր, որ ստիպուած հրաժեշտ պիտի տար լճակին եւ անոր ընակիչներուն եւ բախտի բերուամով պիտի կարենար ազատիլ ստոյդ մահէ : Թափառական հայու իր կեանքը կարծես խաղաղութիւն պիտի չգտնէր, եթէ իրեն այցի չգային իր գիւղի հարազատ ներկայացուցիչները : Անոնք, այդ ինը ձկնիկները, իրենց հետ բերին Ծովքի կապուտակ երկինքը, անոր քիչ մը աղի ջուրին . համը, ափերուն վրայ ձկնոր ութեան պատրաստուող հայ գիւղացիներու խաղերը եւ վերջապէս այն բոլորը, որ Ծովք կը կոչուէր, Ծովք հայաբնակ գիւղ կը կոչուէր, որ հայրենի աշխարհ կը կոչուէր :

«Դուք չեք կրնաք հասկեալ այս խոտութերուն արթէքը»: Յոզիկ շետ մը կայ իր բառերուն մէջ: Աչքերը կը բռնկին արտակարգ փայլով մը: «Խոտութ»ը, կը շարունակէ ան «դեղ է, կեանէ է: Ով որ ուտէ այս խոտութերէն, կեանէք կ'աւելնայ, կ'երիտասարդանայ»: Հոգի՛ղ սիրեմ, սիրելի՛ Գրիգոր: Հաւատդղ սիրեմ: Շատ լսեր էի, որ հայրենի ջուրն ու օդը կենսատու տարրեր են՝ հոգին ու մարմինը կազդուրող, բայց երբէք չի լսած, որ հայրենի լճակներու եւ ծովերու ձուկերն անզամ կընային կեանքը աւելցնել: Սակայն ա՛լ կը հաւատամ, որովհետեւ քեզ արդէն իսկ երիտասարդացած եւ առոյգ կը գտնեմ, երբ մատներովդ կը փորձես լեզու հանել եւ վկայութեան կանչել զանոնք:

բը ը սատսերովզդ կը փորձես լեզու հանել եւ վկայութեան կանչել զանոնք։
Հայրենի խտուտներ, խապրիկ մը չունի՞ք բոլոր Ծովեցիներուն, որոնց
մտերմութեանը մէջ դուք դարերով ապրեցաք, խմելով միեւնոյն ջուրը եւ բաց-
ուելով միեւնոյն արեւուն եւ բնութեան։

ՄԵԿՐՈՊ Ա. ՔԵՆՅ. ՇԱՀԱՐԵԼԻ

ԴԵՊԻ ՈՒԱԾԻՆԿԹԸՆ

Հըաշքով վերապրող սիրելի հայրենակիցներ,

Այս տարուան Ապրիլեան եղեռնի 70-ամեակի բացառիկ ոգեկոչումը մեր բոլորին համար գուցէ վերջինն է, քանի մեր կեանքի ձմեռն է որ կ'ապրինք: Ուրեմն փութանք Ուաշինկուրն հաւաքուիլ: Այստեղ՝ տամուկ աչքերով իրարու նայինք եւ եթէ ոյժ եւ կարողութիւն մնացած է վրանիս, տխուր ժպիտով իրարու փաթթուինք: Թող մեր զաւակները եւ թոռները դիտեն մեզ եւ անպայման որ այդ տեսարանը խորապէս պիտի ազդէ իրենց հոգիներուն եւ անխախտ մնան իրենց հաւատքին մէջ, ու մեր ալ խոռվայոյզ հոգիները հանդարտեցնելով այս օտար հողին յանձնեն:

Ու եկէ՞ք, վերջին փորձը ընենք, աշխարհի մեծամեծներուն (մասնաւանդ երկու մեծերուն) ցուցնելու որ, բոլորովին չենք անհետացած, եւ թէ կենդանի վկաներն ենք այն քստմնելի ոճիրին, զոր գործադրեց թուրք բորենին կանխամտածուած ծրագրով:

Մարդկային պատմութիւնը արձանագրած է նման դէպքեր՝ բայց եւ ոչ մէկը կարելի է համեմատել մեր ժողովրդի գլխու եկածին։ Այս մասին համաշխարհային պատմութեան էջերը լեցուն են անհերքելի փաստերով։ Բայց ի՞նչ պէտք կայ պատմութեան երթալու։ Այս վերջին տարիներուն անոնց կատարած անմարդկային ոճիրները բասական չե՞ն փաստելու համար թէ ոճիրը իրենց արուեստն է։ Զարմանալին այն է, որ իրենց գործած անլուր արարքները ստիպողութեան կը վերագրեն եւ ձայնակիցներ ալ կը ճարեն վարձկան պատմաբաններուն մէջէն։ Օրինակ՝ իրենց պատմաշէնները կը յայտարարեն, որ իրենք են մեր երկրի բնիկ ժողովուրդը . . . : Ի՞նչպէս բացատրել իրենց վերաբերմունքը քիւրտ ժողովուրդին հանդէպ, որոնց հաշուեյարդարը ընելէ ետք Թուրքիոյ մէջ, կը հալածեն նոյնիսկ իրաքի մէջ։ Աւելի քան 20,000-նոց բանակով կիպրոս չարշաւեցի՞ն եւ կնճռոտ հանգոյցի վերածեցին դժբախտ այդ երկրին կացութիւնը։

Այս մտածումներս յուսահատութեան ճիգեր չեն . . . մենք, վերապրողներս, պէտք է երթանք Ուաշինկուն, այն հաւատքով որ մեզ յաջորդող սերունդները պիտի շարունակեն պայքարը մինչեւ հասնին այնտեղ՝ ուր մեր նահատակներու արեւնով ներկուած հողերը դառնօրէն կը միան, եւ ուր մեր փլատակ շէները, լեռները, քարերն անգամ լացով բայց կարօտով իրենց կը սպասեն:

ՍՈՒՐԵՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԵՆԴԱՎԱՅՐ

Առաջին անգամ աշխարհում տեսած
իմ առաւտոն է այնտեղ մնացել,
Նա, որ բուրում էր իբրեւ ցորենիաց
Եւ բուրում իբրեւ գարենիան հող ու ցել ...

Եւ մնացել է առաջին անգամ
Աշխարհում տեսած իմ աղքիւրն այն չինչ,
Որից զբնգուն ու անապական
Եւ որից պայծառ չտեսայ ոչինչ:

Եւ մնացել է լուսեղէն մի ամպ,
Եւ մնացել է այնպիսի մի ծիւն,
Որ իր քարութեամբ ու արդարութեամբ
Նման էր այնպէս մանկութեան Աստծուն

Առաջին անգամ աշխարհում տեսած
իմ առաւտոն է այնտեղ մնացել,
Երկինք ու բարդի, նառագայթ ու լաց,
իմ հոնի հոտն է այնտեղ մնացել ...

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ

ՅԱՆՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ԵՒ ԽԶԳԱՅԻՆ, ԿԸՆՔՈՒԹՅԱԾ

(Гарп: 49 4-Гу)

Ահա թուրքի նպաստը համաշխարհային պատմութեան։
Մինչեւ որ հայը չստանայ իր մարդկային ու ազգային իրաւունքները, աշխարհի բոլոր մարդիկ ու բոլոր ժողովուրդները պիտի շարունակեն տառապել անպատճեան մէջ։ Երբ մէկ հայ իրաւագուրկ է, ապա համայն մարդկութիւնն է իրաւագուրկ։ Նոյնիսկ ազտառութեան ու ժողովրդավարութեան ամրոցները համարուող երկրներն են Հետզհետէ միթագնում՝ մէկ առ մէկ ձեռքից տալով իրենց գաղափարական կոռուանները։ Որովհետեւ երբ մի ժողովրդի մարդկային ու ազգային իրաւունքներն են խախտում, խախտում են նաեւ միւս ժողովուրդների իրաւունքները։ Ահա թէ ինչու Հայոց Սեծ Եղեռնի 70-ամեակի առջեւ ենք կանգնած ոչ որպէս լացակումած խնդրարկու, այլ որպէս պահանջատէր՝ միհանգամայն գիտակ մեր մարդկային ու ազգային իրաւունքների։ Մեր պայքարը նոր է սկսւում։



NATIONAL COMMEMORATIVE COMMITTEE ANNOUNCES MEMBERS

The National Commemorative Committee is composed of an assorted group of committed individuals who, with the help of the Armenian Catholic community, the Armenian Evangelical Union of North America, the Armenian Missionary Association of America, the Armenian National Committee, the Armenian Relief Society, the Armenian Youth Federation, Hamazkain Cultural Association, Homenetmen, and the Prelacy of the Armenian Apostolic Church of America, are working together for the effective commemoration of the Armenian nation's 70th anniversary of the Genocide.

Those on the committee include: *President* - Archbishop Mesrob Ashjian; *Vice President* - Bishop Yerem Tabakian; and *Chairman* - Dr. Hratch Abrahamian. The members on the committee are: Mr. Garo Armenian, Mr. Melkon Baboyan, Mr. Manas Boujikian, Mrs. Arpie Balian, Mr. Nerves Chitjian, Very Rev. Krikor Guerguerian, Mr. Astor Guzelian, Mr. Khatchig Hagopian, Mr. Jirair Haratian, Shant Harootunian, Esq., Rev. Vartan Hartunian, Dr. Zareh Hovanesian, Rev. Moses Janbazian, Mr. Kachadoor N. Kazarian, Armand Keosian, Esq., Ms. N. Khtikian, Dr. John Manuelian, Ms. Kathryn Manuelian, Mr. Onnic Marashian, Dr. Hrand Markarian, Dr. Nora Nersesian, Mr. Yervant Terzian, Sarkis Teshoian, Esq., Mr. Joseph Topalian, and Mr. Vram Yegparian. The Honorary Chairman and Chairwoman are Mr. Krikor Dederian, (109 years), and Mrs. Lucia Khoubesserian, (108 years).

Through the diligent and varied efforts on the part of the committee members, the commemoration seems to be drawing international attention and commitment from some of the world's leading political and religious leaders. Those who have joined as Honorary Members include:

SENATORS

Hon. Joseph R. Biden, Jr. - *Delaware*
 Hon. Rudy Boschwitz - *Minnesota*
 Hon. Bill Bradley - *New Jersey*
 Hon. Alan Cranston - *California*
 Hon. Dennis DeConcini - *Arizona*
 Hon. Robert Dole - *Kansas*
 Hon. John Glenn - *Ohio*
 Hon. Edward Kennedy - *Massachusetts*
 Hon. Carl Levin - *Michigan*
 Hon. Clairborne Pell - *Rhode Island*
 Hon. Paul S. Sarbanes - *Maryland*

GOVERNORS

Hon. Mario M. Cuomo - *New York*
 Hon. George Deukmejian - *California*
 Hon. Michael S. Dukakis - *Massachusetts*
 Hon. Thomas H. Kean - *New Jersey*

CLERGY

Right Rev. John Allin - *Residing Bishop, Episcopal Church*
 Rev. Theodore Hesburgh - *President, Notre Dame U.*
 Hon. Robert J. Marshall - *Lutheran Church*
 Right Rev. Paul Moore, Jr. - *Bishop of New York*
 H.G. Bishop Paulos - *of Ethiopia*
 Most Rev. Metropolitan Philip - *Antiochian Orthodox Christian Archdiocese*
 H.E. Archbishop Athanasius Samuel - *Syrian Orthodox Church of Antioch*
 H.G. Bishop Elias Shaheen - *Manonite Bishop of Canada*
 Rev. John Sutton - *The Foundation for Evangelism, Near East Foundation*
 H.E. Archbishop Joseph Tawil - *Melkite Apostolic Exarchate of U.S.A.*
 H.E. Yakovos - *Primate, Greek Orthodox Archdiocese of North & South America*
 H.E. Archbishop Francis Zayek - *Diocese of Saint Maron, U.S.A.*

CONGRESSMEN

Hon. Frank Annunzio - *Illinois (11th Dist.)*
 Hon. Les Aspin - *Wisconsin (1st Dist.)*
 Hon. Michael Barnes - *Maryland (8th Dist.)*
 Hon. William Broomfield - *Michigan (19th Dist.)*
 Hon. Tony Coelho - *California (15th Dist.)*
 Hon. Edward Feighan - *Ohio (19th Dist.)*
 Hon. Hamilton Fish, Jr. - *New York (21st Dist.)*
 Hon. James Florio - *New Jersey (1st Dist.)*
 Hon. Benjamin Gilman - *New York (22nd Dist.)*
 Hon. Nancy Johnson - *Connecticut*
 Hon. Richard Lehman - *California (18th Dist.)*
 Hon. Matthew G. Martinez - *California (30th Dist.)*
 Hon. Carlos Morehead - *California (22nd Dist.)*
 Hon. Charles Pashayan - *California (17th Dist.)*
 Hon. John Porter - *Illinois (10th Dist.)*
 Hon. Peter Rodino, Jr. - *New Jersey (10th Dist.)*
 Hon. Thomas P. O'Neill - *Massachusetts (8th Dist.)*
 Hon. Robert Roe - *New Jersey (8th Dist.)*
 Hon. Robert Torricelli - *New Jersey (9th Dist.)*
 Hon. Henry Waxman - *California (24th Dist.)*
 Hon. Jim Wright - *Texas (12th Dist.)*
 Hon. Gus Yatron - *Pennsylvania (6th Dist.)*

SECRETARY OF STATE & STATE SENATOR

Hon. Julia Tashjian - *Connecticut*
 Hon. Garabed Haytaian - *New Jersey*

AMBASSADORS

H.E. Abdullah Bouhabib - *Lebanon*
 Hon. Henry Morgenthau, Jr. - *Grandson of Henry Morgenthau Ambassador of U.S.A. to Turkey (1915)*

It is with the help and support of all these people mentioned, and many more, that the 70th Anniversary Commemoration will be a success and will draw the necessary international, national, and political attention it so desperately needs and so rightfully deserves.

ԵՐԲ ՊԻՏԻ ԳԱՔ

Ամեն շիրիմ մեռելոցի այս օրով
 Խունկ ու ծաղիկ կ'ընդունի,
 Ես կորոնեմ իմ անհիններըս խոռվ,
 Թափառայած զերդ ոգի:

Ո՞ր առին մէջ, ո՞ր քարին տակ անծանօք
 Ինկան անոնք զիր ու ցան.
 Գիշեր մը նենգ դահինի ձեռքն արիւնու
 Զիս տապալց անկենդան:

Շա'տ էինք մենք՝ պարանակապ եւ անզօր՝
 Խումբն այրերու տակ ինկած,
 Կեռ դաշոյնի եւ տապարի զոյգ նեղքեր՝
 Կողիս վրայ լայնարաց:


Կը խրսէր հողը իմ շուրջ տեւապէս
 Մեռելներով դեռ արթուն.
 Կը լսի եւ կը լսեմ միշտ կարծես
 Հոգեվարքի հոնդիւն ...

Մահը փակեց լոյսն աչքերուս յաւիտեան
 Եւ ալ երբ' չ չուսայ,
 Թէ զիս յետոյ քանի՛ բոշուն ու գագան
 Յօշոտեցին անխնայ ...

Մեր բազմամարդ տան կարաւանն ո՞ւր գնաց
 Ան կը քալէ՞ դեռ անվերջ ...
 Լուծն արօրիս մնաց արտին մէջ լուսած
 Եւ օթախիս հուրը՝ շէց ...

Ե՞րբ պիտի գաֆ եւ դառնաք տէր նահատակ
 Անհիններուս անշիրիմ,
 Դուք որ կ'ապրիի եւ ժառանգորդն է՛ մինակ
 Եմ լուսեղէն երազին ...

Մ. ԽՇԱՆ



ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ ՀԱՒԱՔ

ՈՒՍՏԻՒՆԿԹԸՆ, 24-28 ԱՊՐԻԼ 1985

Անուն Մականուն _____ Ծննդեան թուական _____

Ծննդապայր _____ Երկիրը ձգած եմ (թուական) _____

Եթէ կը փափաքիք մասնացիլ վերապրողներու նոր Ուխտի հաւաքին, յառաջիկայ Ապրիլ 28, 1985-ին Ուաշինգտոնի մէջ, հաճեցէք խաչանիշով նշանակել ստորեւ ներկայացուած ձեզի վերաբերող մասերը. —

Կը ԾՐԱԳՐԵՄ ՈՒՍՏԻՆԿԹԸՆ ՃԱՄԲՈՐԴՆԵԼ. —

Ըստանիքս անդամներուն հետ 28 Ապրիլի ցերեկը ըլլալ Ուաշինգտոնի մէջ

Անձնական միջոցներով 27-28 Ապրիլին մնալ Ուաշինգտոն

Շոգեկառքով Ազգական-քարեկամներու հետ մնալ

Եկեղեցին ճամբար ելեւ պըսով Կը նախընտրեմ պանդոկ մնալ

Նիւթական միջոցներս կը ներեն, որ անձնապէս հոգամ ճամբորդութեանս եւ քնակութեանս ծախսերը:

Գոհ կը մնամ, եթէ նիւթական աշակցութիւն ստանամ այս ճամբորդութիւնը կարենալ կատարելու համար:

Ներփակ կը գտնէք իմ նուէրս՝ այս մեծ ծրագրի յաջողութեան համար. —

\$10 \$25 \$50 \$100 \$500 \$_____ ուրիշ

ԶԵՐ ՀԱՍՑԵՆ. —

Անուն Մականուն _____

Հասցէ _____

Հեռածայնի թիւ () _____

Այս հարցարանը լեցնելէ ետք, հաճեցէք անմիջապէս ուղարկել հետեւեալ հասցէին. —

Prelacy of the Armenian Apostolic Church of America

138 East 39th Street

New York, N.Y. 10016

